



Հոգաբարձուների Խորհրդի

նախագահ

Ն. Երիցյան

**Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա  
(Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1.1 Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) գիտական խորհուրդը կազմակերպության գիտական և գիտա-տեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

1.2 Գիտական խորհուրդը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն կանոնակարգով, որը կազմված է Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան և հաստատվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

1.3 Գիտական խորհրդի գործունեությունը նպատակաուղղված է հիմնադրամի տարրական մասնիկների ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի, կիրառական հետազոտությունների, գիտատեխնոլոգիական մշակումների բնագավառում կատարվող գիտահետազոտական աշխատանքների և տեխնիկական մշակումների բարձր մակարդակի ապահովմանը:

## **2. Հիմնական խնդիրները**

2.1 Հիմնադրամի գիտական խորհրդի հիմնական խնդիրներն են.

- Հիմնադրամի ընդհանուր գիտատեխնիկական քաղաքականության մշակումը.
- Հիմնադրամի գիտական հետազոտությունների հեռանկարային ծրագրերի մշակումը.
- Պետական պատվերի գծով հիմնադրամի առաջարկությունների ձևավորումը և կատարման բարձր մակարդակի ապահովումը.
- Հիմնադրամում գիտական հետազոտությունների կազմակերպչական նոր ձևերի առաջարկումը.
- Հիմնադրամի գիտատեխնիկական նվաճումները գիտության և տեխնիկայի հարակից ասպարեզներում և արդյունաբերության բնագավառում ներդրման աջակցումը.
- Հիմնադրամի կողմից կազմակերպվող գիտակազմակերպչական միջոցառումների անցկացումը.

## **3. Հիմնական ֆունկցիաները**

3.1 Հիմնադրամի գիտական խորհրդի իրավասություններն են՝

3.1.1 հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկությունների ներկայացումը.

3.1.2 գիտական նախագծերի, թեմաների, ծրագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ երաշխավորագրերի տրամադրումը.

3.1.3. գիտական և գիտատեխնիկական գործունեությանը առնչվող այլ հարցերի քննարկումը, ինչպես նաև առաջարկությունների ներկայացումը հոգաբարձուների խորհրդին.

Հիմնադրամի գիտական խորհուրդը, իր հիմնական խնդիրներին համապատասխան՝

3.2 քննարկում է հիմնադրամի գիտատեխնիկական երկարաժամկետ ծրագրերն ու նախագծերը, հիմնադրամի խնդիրներին համապատասխան՝ տալիս է առաջարկություններ գիտական հետազոտությունների հեռանկարային ուղղությունների վերաբերյալ.

3.3 քննարկում է պետական պատվերի գծով գիտատեխնիկական պայմանագրերի առաջարկություններ.

3.4 քննարկում է կատարվող և ավարտվող գիտական թեմաների և գիտատեխնիկական պայմանագրերի միջանկյալ և ավարտական հաշվետվությունները.

3.5 քննարկում է միջազգային գիտատեխնիկական համագործակցության պայմանագրերը և պլանները.

3.6 առաջարկություններ է տալիս հիմնադրամի կառուցվածքի բարելավման և փոփոխության վերաբերյալ.

3.7 հիմնադրամում կատարված աշխատանքների հիման վրա ներկայացնում է հայտնագործություն ձևակերպելու և մրցանակաբաշխություններին մասնակցելու հայտեր.

3.8 հիմնադրամի անունից առաջարկություններ է անում ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամ ընտրվելու համար, այլ պատվավոր կոչումներ ստանալու համար.

3.9 թեկնածություններ է ներկայացնում կազմակերպության աշխատակիցներին հաստատված կարգով պրոֆեսորի գիտական կոչումներ շնորհելու համար.

3.10 կադրերի պատրաստման և մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով`

- հայտարարում է ասպիրանտուրայի ընդունելության կարգը և հաստատում է ընդունելության արդյունքները.
- հաստատում է ասպիրանտների և հայցվորների թեկնածուական գիտական թեզերի թեմաները և ղեկավարներին.
- հաստատում է դոկտորական թեզերի թեմաները.

3.11 առաջարկություններ է ներկայացնում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին կազմակերպության տնօրենի թեկնածությունների վերաբերյալ:

3.12 տնօրենի ներկայացմամբ քննարկում է հիմնադրամի տարեկան հաշվետվությունը:

#### **4. Գիտական խորհրդի կառուցվածքը և կազմը**

4.1 Հիմնադրամի գիտական խորհուրդը կազմված է խորհրդի նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և խորհրդի անդամներից:



4.2 Հիմնադրամի գիտական խորհուրդը բաղկացած է 25 անդամներից. գիտական խորհրդի ի պաշտոնե անդամ է հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը:

4.3 Գիտական խորհրդի ոչ ի պաշտոնե անդամները առաջադրվում են հիմնադրամի առաջատար գիտնականներից գիտատեխնիկական անձնակազմի առաջադրմամբ: Գիտական խորհրդի կազմը ընտրվում է գիտատեխնիկական անձնակազմի ընդհանուր ժողովում փակ գաղտնի քվեարկությամբ՝ ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ: Հիմնադրամում չաշխատող մասնագետները գիտական խորհրդի անդամ են ընտրվում տնօրենի ներկայացմամբ՝ բաց քվեարկությամբ: Ի պաշտոնե և հրավիրված անդամների թիվը չպետք է գերազանցի գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդը:

4.4 Գիտական խորհրդի կազմը ընտրվում է “Գիտական խորհրդի ընտրման կարգ”-ի համաձայն:

4.5 Գիտական խորհրդի նախագահը և նախագահի տեղակալը ընտրվում են խորհրդի անդամներից: Գիտական խորհրդի նախագահն ու քարտուղարն ընտրվում են գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությամբ՝ ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ: Գիտական խորհրդը իրավասու է ընդունելու որոշումներ, եթե նիստին մասնակցում են նրա անդամների առնվազն երկու երրորդը:

4.6 Գիտական խորհրդի կազմը հաստատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ 3 տարի ժամկետով:

## **5. Գիտական խորհրդի աշխատանքի կարգը**

5.1 Գիտական խորհրդի աշխատանքների կազմակերպումը իրականացնում է խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը:

5.2 Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը իրականացնում է խորհրդի գիտական քարտուղարը:

5.3 Գիտական խորհրդի նիստերը կայանում են ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

5.4 Գիտական խորհրդի նիստը գումարվում է նախագահի կողմից, կամ նրա պարտականությունները կատարող նախագահի տեղակալի կողմից, ինչպես նաև կազմակերպության տնօրենի կողմից (եթե նա չի համատեղում



նախագահի պաշտոնը) և կամ գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով:

5.5 Գիտական խորհրդի նախատեսված նիստի և նրա օրակարգի մասին խորհրդի անդամները տեղեկացվում են որպես կանոն ոչ ավելի ուշ քան 5 օր առաջ:

5.6 Գիտական խորհրդի քարտուղարի պարտականություններն են՝ խորհրդի աշխատանքային պլանի նախագծի պատրաստումը, խորհրդի հաշվետվության նախագծի պատրաստումը, նիստերին քննարկվելիք հարցերի նախապատրաստումը, խորհրդի անդամների տեղեկացումը նիստերի և նրանց օրակարգերի մասին, նիստերի արձանագրությունների վարումը, խորհրդի որոշումների տարածումը խորհրդի անդամներին, խորհրդի որոշումների և հանձնարարականների ժամանակին իրագործման վերստուգումը:

5.7 Գիտական խորհրդի աշխատանքային պլանը կազմվում է 1 տարի ժամկետով, քննարկվում և հաստատվում է խորհրդի նիստում:

5.8 Գիտական խորհրդի նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ նյութերը նախօրոք պատրաստվում են պատասխանատու անձանց կողմից, խորհրդի անդամներին հնարավորություն է տրվում նախօրոք ծանոթանալ այդ նյութերի հետ:

5.9 Գիտական խորհրդի նիստում քննարկված բոլոր հարցերը ձևակերպվում են արձանագրության տեսքով, որը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը՝ ոչ ավելի ուշ, քան նիստից 3 օր հետո: Գիտական խորհրդի որոշումները ուժի մեջ են մտնում արձանագրությունը ստորագրելու պահից: Այդ որոշումները առանձին ձևակերպվում են և տեղադրվում են հիմնադրամի ինտերնետային կայքում՝ աշխատակիցներին տեղեկացնելու համար:

5.10 Գիտական խորհուրդն իրավասու է ընդունել որոշումներ, եթե նիստին մասնակցում են նրա անդամների առնվազն երկու երրորդը: Գիտական խորհրդի որոշումն ընդունված է համարվում, եթե դրա օգտին քվեարկել է ներկաների կեսից ավելին: Որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը որոշում չի ընդունում փակ գաղտնի քվեարկություն կատարելու մասին:

5.11 Գիտական խորհրդի նիստին կարող են մասնակցել (առանց քվեարկելու իրավունքի) կազմակերպության այն աշխատակիցները, որոնք խորհրդի անդամ չեն:

5.12 Ընդունված որոշման հետ իր անհամաձայնությունը արտահայտած գիտական խորհրդի անդամը իրավունք ունի իր հատուկ կարծիքը արտահայտել նիստի արձանագրության մեջ՝ հատուկ գրառումով:

## **6. Գիտական խորհրդի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը**

### **6.1 Գիտական խորհուրդը իրավունք ունի՝**

- Խորհրդատվության նպատակով իր նիստերին հրավիրել մասնագետներ և աշխատակիցներ ինչպես կազմակերպության կազմից, այնպես էլ այլ կազմակերպություններից և հիմնարկներից:
- Ստեղծել հանձնաժողովներ և անցկացնել խորհրդակցություններ խորհրդի նիստերում քննարկվող հարցերի նախապատրաստման համար:
- Գիտական խորհրդի իրավասությանը վերաբերվող հարցերի քննարկման նախապատրաստման համար պահանջել գիտական, սպասարկող և ֆունկցիոնալ ստորաբաժանումների ղեկավարներից անհրաժեշտ նյութեր և տեղեկություններ:

### **6.2 Գիտական խորհրդի անդամները իրավունք ունեն՝**

- Մասնակցել խորհրդի նիստերին որոշիչ ձայնի իրավունքով:
- Հարցեր առաջարկել խորհրդի նիստերի քննարկմանը:

### **6.3 Գիտական խորհրդի անդամները պարտավոր են՝**

- Ներկա լինել գիտական խորհրդի նիստերին և ակտիվորեն մասնակցել նրանց աշխատանքին:
- Ժամանակին կատարել խորհրդի որոշումները և հանձնարարականները և աջակցել խորհրդի նիստերի նախապատրաստմանը:

6.4 Գիտական խորհրդի մեկ տարվա ընթացքում գումարված նիստերի թվի կեսից ավելի թվով նիստերին չմասնակցած գիտական խորհրդի անդամները խորհրդի որոշմամբ դուրս են մնում գիտական խորհրդի կազմից: Գիտական խորհրդի կազմի համալրումը կատարվում է ընտրությունների արդյունքում չընտրված, բայց համապատասխան գիտական ուղղություններում առավելագույն ձայներ ստացած թեկնածուներով:

## **7. Գիտական խորհրդի բաժանմունքները**

7.1 Կազմակերպության գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղությունների հետ կապված հարցերի քննարկման համար, գիտական խորհրդի որոշման համաձայն բաժիններում կարող են ստեղծվել գիտական խորհրդի համապատասխան բաժանմունքներ (հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր):

7.2 Գիտական խորհրդի բաժանմունքների ֆունկցիաների մեջ, որպես կանոն, մտնում են մաս 3-ում նշված հարցերի նախնական քննարկումները, նրանց մանրակրկիտ մշակումը այդ բնագավառի մասնագետների կողմից, նյութերի մշակումը և ներկայացումը կազմակերպության գիտական խորհրդին:

7.3 Գիտական խորհրդի բաժանմունքների ներկայացրած հարցերի վերաբերյալ վերջնական որոշման իրավունքը պատկանում է կազմակերպության գիտական խորհրդին:

7.4 Գիտական խորհրդի բաժանմունքների գործունեությունը համակարգում է կազմակերպության գիտական խորհուրդը, նրա քարտուղարը իրականացնում է գիտական խորհրդի բաժանմունքների քարտուղարների աշխատանքների մեթոդական ղեկավարումը:

## **Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի**

### **Գիտական խորհրդի ընտրման կարգ**

1.1 Գիտական խորհրդի կազմը ընտրվում է Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) գիտատեխնիկական անձնակազմի ընդհանուր ժողովում:

1.2 Հիմնադրամի գիտատեխնիկական անձնակազմի ընդհանուր ժողովը գումարվում է հիմնադրամի տնօրենի կարգադրության համաձայն:

1.3 Գիտատեխնիկական անձնակազմի ընդհանուր ժողովը վարում է հիմնադրամի տնօրենը:

1.4 Հիմնադրամի գիտական խորհուրդը բաղկացած է 25 անդամներից, գիտական խորհրդի ի պաշտոնե անդամ է հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը:



1.5 Գիտական խորհրդի ոչ ի պաշտոնե անդամները առաջադրվում են հիմնադրամի առաջատար գիտնականներից՝ գիտատեխնիկական անձնակազմի առաջադրմամբ, որոնց ընտրությունը կատարվում է գիտատեխնիկական անձնակազմի ընդհանուր ժողովում փակ գաղտնի քվեարկությամբ՝ ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ, պայմանով, որ քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը կազմում է ընտրողների ընդհանուր թվի երկու երրորդից ոչ պակաս:

1.6 Հիմնադրամում չաշխատող մասնագետները գիտական խորհրդի անդամ են ընտրվում տնօրենի ներկայացմամբ՝ բաց քվեարկությամբ, ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ:

1.7 Ի պաշտոնե և հրավիրված անդամների թիվը չպետք է գերազանցի գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդը:

1.8 Հիմնադրամի գիտատեխնիկական ուղղություններին համապատասխան սահմանվում են գիտական խորհրդի անդամության քվոտաներ բաժանմունքների համար հետևյալ համամասնությամբ՝

- Փորձարարական ֆիզիկայի բաժանմունք – 6
- Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժանմունք – 4
- Տեսական ֆիզիկայի բաժանմունք – 4
- Կիրառական ֆիզիկայի բաժին – 2
- Իզոտոպների արտադրության բաժին – 1
- ՏՏ տեխնոլոգիաների բաժին – 1
- Տիեզերագիտության և աստղաֆիզիկայի կենտրոն – 1

1.9 Գիտական խորհրդի կազմի մնացած տեղերը համալրվում են առավելագույն ձայներ ստացած մյուս թեկնածուներից:

1.10 Եթե քվեարկության արդյունքում քվոտաները և գիտական խորհրդի կազմի մնացած տեղերը չեն լրացվում, ապա կատարվում է լրացուցիչ քվեարկություն:

1.11 Գիտական խորհրդի կազմի ընտրության արդյունքները հիմնադրամի տնօրենը ներկայացնում է հոգաբարձուների խորհրդին այն հաստատելու համար:

1.12 Գիտական խորհրդի կազմը հաստատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ 3 տարի ժամկետով: